

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 5-ՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ԽՈՇՈՐ ԿԱԳՈՒՑՈՒՄՆԵՐԻՆ (1951—1955 ԹԹ.)

Հ. Հ. ԱԶԻԶՅԱՆ

Սոցիալիզմի կառուցման և սոցիալիզմից աստիճանաբար կոմունիզմին անցնելու լճական պայմանը Վ. Ի. Լենինը տեսնում էր սոցիալիստական հասարակության արտադրողական ուժերի անընդհատ զարգացման, աշխատանքի արտադրողականության աճի, սոցիալիզմի նյութատեխնիկական բազայի աճի և ժողովրդական տնտեսության բազմակողմանի էլեկտրիֆիկացման մեջ: 1920 թվականին Սովետների Համառուսաստանյան 8-րդ համագումարում ժողովրդական կոմիսարների Սովետի գործունեության մասին տված իր զեկուցման մեջ Վ. Ի. Լենինը ասում էր. «Ն՞վե Ռուսաստանը ծածկվի էլեկտրակայանների և հզոր տեխնիկական սարքավորումների խիտ ցանցով, այն ժամանակ մեր կոմունիստական տնտեսական շինարարությունը օրինակ կդառնա դալի՜ր սոցիալիստական նվիրյալի և Ասիայի համար»¹:

Սովետական Միության կոմունիստական պարտիան կոմունիստական հասարակություն կառուցելու իր ղեկավար գործունեության ընթացքում միշտ ելել և ելնում է երկրի էներգետիկ ռեսուրսների օգտագործման վերաբերյալ լենինյան դրույթներին:

Մեր երկրի սնական անսպառ հարստությունների օգտագործման սկիզբը դրվեց դեռևս Սովետական իշխանության առաջին տարիներին: 1918 թ. ապրիլին Վ. Ի. Լենինը կազմում է «Պիտու-տեխնիկական աշխատանքների պլան», որի մեջ կարևոր տեղ էր հատկացվում Ռուսաստանի բնական ռեսուրսների սխտեմատիկ ուսումնասիրման և օգտագործման խնդիրներին:

1920 թ. փետրվարին Վ. Ի. Լենինի առաջարկով ստեղծվեց Ռուսաստանի էլեկտրիֆիկացման պլանը: ԳՈՒԼԻՌ-ի պլանը հաստատվեց Սովետների Համառուսաստանյան 8-րդ համագումարում 1920 թ. դեկտեմբերին: ԳՈՒԼԻՌ-ի պլանը քննարկվելու օրերին, Ռուսաստանի ժողովրդական տնտեսության էլեկտրիֆիկացման արշավույթին, Լենինն ասում էր. «Կոմունիզմը—դա Սովետական իշխանության համար է՝ պլանը ամրալք և րկրի էլեկտրիֆիկացիան»²: Երկրի էլեկտրիֆիկացման պլանի մեջ մարմնավորվեցին սովետական էներգետիկայի զարգացման ընթացիկ լենինյան վսեմ գաղափարները: Այն կենտրոնական միտքը, որով ներթափանցված էր աճող պլանը, աշխատանքի արտադրողականության զեկական բարձրացումն էր: Որպես այդ խնդրի կատարման հզոր միջոց առաջադրվում էր ժողովրդական տնտեսության բուրժուազանի էլեկտրիֆիկացումը:

Կոմունիստական պարտիան կազմակերպեց և մոբիլիզացրեց սովետական ժողովրդի ուժերը երկրի էլեկտրիֆիկացման լենինյան պլանի կենսագործման համար:

Հայրենական Մեծ պատերազմի նախօրյակին ՍՍՄ-ի էլեկտրակայանները տարեկան արտադրում էին 25 մեգատ ավելի էլեկտրաէներգիա, քան ցարական Ռուսաստանի էլեկտրակայանները 1913 թվականին: Չնայած որ պատերազմը ժամանակավորապես շնչահատեց սովետական ժողովրդի խաղաղ աշխատանքը, բայց էլեկտրակայանների շինարարությունը շարունակվեց կովկասում, Միջին Ասիայում և Միբրում:

Հետպատերազմյան տարիներին սովետական ժողովուրդը, պարտիայի նախագծումներով, նոր հաջողություններ ձեռք բերեց մեր երկրի էներգետիկ հարստությունների կոմպլեքսային

¹ Վ. Ի. Լենին, Ներքեր, հատ. 51, էջ 606:

² Նույն տեղում, էջ 654:

օգտագործման ուղղութիւնում Այդ նպատակին էին ուղղված Վոլգա գետի վրա Կույբիշկյան ու Ստալինգրադյան, Գնեպր գետի վրա Կախովկայի հիդրոէլեկտրակայանների, Վոլգա-Դոն նավարկելի ջրանցք կառուցելու և Ռոստովի ու Ստալինգրադի մարզերի հողերը ոռոգելու մասին ՍՍՌՄ Մինիստրների Սովետի 1950 թ. երկրորդ կեսին ընդունած որոշումները:

ՍՍՌՄ-ում այդ նոր խոշոր հիդրոտեխնիկական կառուցումների մասին պարտիայի և կառավարության որոշումների հիմքում ընկած էր մեր երկրի հետագա տեխնիկական առաջադիմության, արտադրողական ուժերի զարգացման և սովետական ժողովրդի նյութական և կուլտուրական հարաճուն պահանջմունքների բավարարման մեծ նպատակը: Կույբիշկյան և Ստալինգրադյան, ինչպես նաև Վոլգա և Դոն գետերի վրա արդեն կառուցված հիդրոէլեկտրակայաններից ստացվող էլեկտրաէներգիան և այդ շրջանների հումքի հարուստ ռեսուրսների օգտագործումը լայն հնարավորություններ ստեղծեցին մետաղամշակման, քիմիական, դոնավոր մետաղների, շինանյութների և այլ արդյունաբերական ձեռնարկությունների կառուցման համար: Դրանք մեծ նշանակություն ունեցան ընդարձակ տեխնոլոգիաների արտադրողական ուժերի բազմակողմանի զարգացման և ժողովրդական անտեսությունը տեխնիկական հզոր պատվանդանի վրա փոխադրելու համար:

Ժողովրդատնտեսական մեծ նշանակություն տալով Վոլգա-Դոն ջրային ուղու ստեղծմանը և դրա հետ միասին հաշվի առնելով, որ այդ շինարարությունը թույլ է տալիս լայնորեն զարգացնել Ռոստովի ու Ստալինգրադի մարզերի կիսանպաստային և չոր շրջանների հողերի ոռոգումն ու դրանց ջրովի դարձնելը, ՍՍՌՄ Մինիստրների Սովետը 1950 թ. դեկտեմբերի 28-ին որոշում ընդունեց «Վոլգա-Դոն նավարկելի ջրանցք կառուցելու մասին»: Հետագա տեղաշարժման հնգամյա պլանի հաջող կատարումը, մեր երկրի տեխնիկական աննախընթաց առաջադիմությունը, ինչպես նաև տեխնիկական լավագույն կադրերի ստեղծումը հնարավորություն տվեցին պարտիային ու կառավարությանը 1951 թ. հունվարին ընդունելու լրացուցիչ որոշում՝ ջրանցքի կառուցման ժամկետը երկու տարով կրճատելու մասին, այն հաշվով, որ Վոլգա-Դոն ջրանցքի շինարարությունն ավարտվի 1952 թվականին:

Վոլգա-Դոն ջրանցքի ժողովրդատնտեսական նշանակությունն ամենից առաջ այն է, որ մասսայական բեռները գետային տրանսպորտի միջոցով փոխադրելու դեպքում հանրային աշխատանքի մեծ խնայողություն է կատարվում և ղգալիորեն կրճատվում են երկաթուղային տրանսպորտի միջոցով բեռները փոխադրելու ծախսերը: Դա հնարավորություն տալիս է ավելի բարձրացնելու փոխադրումների ծավալը, հեշտացրեց և ինտենսիվ դարձրեց տրանսպորտային կապը ՍՍՌՄ եվրոպական մասի մի շարք տնտեսական շրջանների միջև: Զբաղի ճանապարհով փոխադրվում են Դոնի շրջանի ածուխը, մետաղը, մարգանցը, Ազովի ձուկը, Հյուսիսային Կովկասի միրգը, հյուսիսից փոխադրվում են անտառանյութ, թուղթ, ավտոմեքենաներ, տրակտորներ, նավթամթերներ: Զրանցքի միջոցով երկրի շատ շրջաններ ելք ստացան դեպի ծովերն ու օվկիանոսները: Զրանցքը և նրա կենտրոնական օղակը՝ Ցիմլյանսկի կարգավորիչ ջրամբարը, միաժամանակ հանդիսանում են ոռոգման և լրացուցիչ ջրամատակարարման մի սխեմա:

Վոլգա-Դոն նավարկելի ջրանցքը բացվեց 1952 թ. հուլիսի 27-ին, և այդ օրվանից սկսվեց նավերի նորմալ երթևեկությունը ջրանցքով: ՍՍՌՄ Գերագույն Սովետի Սախագահության հրամանագրով Վոլգա-Դոն նավարկելի ջրանցքը կոչվեց Վ. Ի. Լենինի անունով:

Մեր լայնածավալ սոցիալիստական Հայրենիքի բոլոր ռեսպուբլիկաներում ու մարզերում, նրա ամենահեռավոր անկյուններում բաշխվողներն ու բանվորուհիները, գիտություն մարդիկ իրենց պատրաստակամությունը հայտնեցին ամեն կերպ օգնելու հիդրոտեխնիկական այդ հրաշալի կառուցումներին, դրանք համարելով իրենց հաջազատ, համաժողովրդական մեծ գործը:

Խոշոր կառուցումների համաժողովրդական բնույթը որոշվում է նախով, որ դրանք ավելի են ամրապնդում սոցիալիստական սխեման, նրա հզորությունը և հսկայական տեխնոլոգիայի վրա վերափոխում բնությունն ու էկոնոմիկան: Դրանց համաժողովրդական բնույթը արտահայտվում է նաև նրանում, որ այդ հիդրոկայանների ու ջրանցքների կառուցումներին ակտիվ մասնակցություն ցույց տվեցին Սովետական Միության բոլոր ազգային ռեսպուբլիկաները, բոլոր երկրամասերը, ավտոնոմ մարզերն ու ռեսպուբլիկաները. այդ կառուցումների մեջ մարմնավորվեցին սովետական բազմազգ ժողովրդի մտավոր ու ֆիզիկական ուժերը: Այն փաստը, որ բոլոր ռեսպուբլիկաներն իրենց ակտիվ մասնակցությունն ու օգնությունը ցուցաբերեցին հզոր կառուցումներին և բավարարեցին դրանց ամենաբազմազան ու բարդ պահանջները, ցույց է տալիս, որ մեր երկրում, Կոմունիստական պարտիայի վարած ազգային ճիշտ քաղաքականու-

թյան շնորհիվ, բոլոր ռեսպուբլիկաները դարձել են արդյունաբերության, գյուղատնտեսության ու կուլտուրայի տեսակետից զարգացած ռեսպուբլիկաներ, որը և հնարավորություն բնական չէրանց՝ մասնակցելու տեխնիկայի վերջին խոսքով կատարվող համաժողովրդական այդ կառուցումներին: Իրանում վառ կերպով արտահայտվեցին սովետական ռեսպուբլիկաների եղբայրական համագործակցությունը, սովետական ժողովուրդների օրրոստը ամրապնդվող բարեկամությունը, նրանց փոխօգնությունն ու աննկուն կամրջ՝ կոմունիզմի համար մղվող համատեղ պայքարում:

Երկրի տարրեր վայրերից երկաթուղային էջերն են ու նավերը կառուցման վայրերն էին փոխադրում Մոսկվայի արտադրած ավտոմեքենաները, էլեկտրաշարժիչները, բետոնի ավտոմատ գործարանները, լենինդրագում յատրաստված՝ աշխարհում ամենահզոր էլեկտրատուրբիններն ու էլեկտրասարքավորումները: Ուկրաինայի, Ուրալի արդյունաբերական կենտրոններից ստացվում էին հզոր էքսկավատորներ և շինարարական այլ բարդ մեքենաներ: Գորկու, Ստալինգրադի, Կույբիշևի, Կազանի, Բաքվի, Թբիլիսիի և այլ քաղաքների ձեռնարկությունները հիդրոէներգիայի շինարարությանը մատակարարեցին արժեքավոր սարքավորումներ: Հյուսիսային շրջանները կառուցումներն ապահովեցին անտառանյութով, ցեմենտով և այլ շինանյութերով: Գնալով աճում ու ամրապնդվում էր կապը կառուցողների ու նրանց պատվերները կատարող գործարանների ու գիտահետազոտական հաստատությունների միջև: Սովետական մարդկանց համար պատվի գործ դարձավ նորակառույցների պատվերների կատարումը:

Հայ ժողովուրդը, Սովետական Միության բոլոր ժողովուրդների հետ միասին, ժողովուրդների միասնական բնառնությամբ մեծադույն եռանդով մասնակցեց հիդրոտեխնիկական նոր կառուցումների շինարարությանը, իր համեստ, բայց արժեքավոր ավանդը մուծելով մեր հայրենիքի նյութա-տեխնիկական բազայի հարստացման գործում:

Ռեսպուբլիկայի արդյունաբերական ձեռնարկությունները՝ Երևանի էլեկտրամեքենաշինական, էլեկտրատեխնիկական, Կաթնի, Ավտոդետալ, Փոքր հիդրոտուրբինների, Կարբիդի, Քիմիական, էլեկտրալուսավորության արձատուրայի, Կոմպրեսորների, Շինանյութերի, էլեկտրական ճշգրիտ չափիչ գործիքների, Ավտոդողերի գործարանները և այլ արդյունաբերական ձեռնարկություններ իրենց պատրաստակամությունը հայտնեցին մասնակցելու Վոլգա-Գոնի հիդրոտեխնիկական համաժողովրդական կառուցումներին:

Հայաստանի արդյունաբերական ձեռնարկությունները շինարարությունների վայրերն ուղարկեցին արժեքավոր սարքավորումներ և նյութեր՝ տրանսֆորմատորներ, գեներատորներ, պոմպեր, կաթնլայի արտադրանք, ավտոդողեր, կարբիդ, ավտոմոբիլի պահեստամասեր, շինանյութեր և այլն:

Սովետական հայրենասիրությամբ տոգորված հայ աշխատավորները՝ գործարանների ու ֆաբրիկաների բանվորները, վարպետներն ու ինժեներա-տեխնիկական աշխատողները հետևում էին հիդրոտեխնիկական կառուցումների աշխատանքների ընթացքին և նրանց պատվերների կատարմանը նվիրում իրենց ստեղծագործական նախաձեռնությունն ու աշխատանքային եռանդը:

Այդպիսի հայրենասիրության վառ օրինակ հանդիսացավ Երևանի Վ. Ի. Լենինի անվան էլեկտրամեքենաշինական գործարանի օգնությունը նոր էլեկտրակայանների և ջրանցքների կառուցումներին: Գործարանի անունը մտավ միության այն ձեռնարկությունների շարքը, որոնք առաջինը պատրաստակամություն հայտնեցին կատարելու խոշոր շինարարությունների պատվերները: Գործարանն առաջին պատվերն ստացավ Կույբիշևյան և Ստալինգրադյան հիդրոէլեկտրակայանների շինարարներից, որոնք պահանջել էին ուղարկել 22 ուժային տրանսֆորմատորներ: Այդ առաջադրանքը կատարվեց ժամկետից շուտ: Շինարարներին ուրախացրին Երևանում պատրաստված բարձրորակ տրանսֆորմատորները, և այդ պահից ստեղծվեց սերտ կապ շինարարների ու արտադրողների միջև: Գործարանի կոլեկտիվը մի նամակով դիմեց շինարարներին. «Կատարելով ձեր պահանջը, սպասում ենք նոր առաջադրանքների: Կոլեկտիվը պատրաստ է ամեն մի նոր առաջադրանք կատարել ժամկետից շուտ և որակով»:

¹ Երևանի Հայէլեկտրամեքենաշինական գործարանի արխիվ, 1951, դ. 3:

Նորակառույցներում բազմապիսի բարդ մեքենաների անխափան աշխատանքն ապահովելու համար պահանջվում էին միջին կարողություն կատարելագործված բազմաթիվ տրանսֆորմատորներ: 1951 թվականին գործարանը դաժձյալ պատվեր ստացավ Կույբիշևյան ու Ստալինգրադյան հիդրոէլեկտրակայաններից և Կույբա-Դոն ջրանցքի շինարարությունից՝ պատրաստելու տարբեր մարկայի 196 ուժային տրանսֆորմատորներ: Գործարանի կոլեկտիվը մեծ ոգևորությամբ ձեռնամուխ եղավ առաջադրանքի կատարմանը: Յուրարանչուր բանվոր ու վարպետ, ինժեներ ու տեխնիկ, կոնստրուկտոր ու գծագրիչ պատվի գործ համարեց այդ նոր առաջադրանքի կատարումը: Ցխևերում, բրիգադներում ու աշխատանքային տեղամասերում ծավալված սոցիալիստական մրցության շնորհիվ պատվերները կատարվեցին ժամկետից շուտ: Հիդրոհանգույցների շինարարներին մեծ ուրախություն պատճառեց բարձր արտադրողականությամբ աշխատող տրանսֆորմատորների ստացումը, և գործարանին հանձնարարվեց պատրաստել 7 տիպի ուժային նոր, ավելի հզոր տրանսֆորմատորներ, որոնցից 4 տիպի տրանսֆորմատորների արտադրությունը բոլորովին նոր պետք է յուրացվեր, այն էլ՝ կարճ ժամանակամիջոցում:

Նորակառույցներում պահանջվում էին այնպիսի էլեկտրամեքենաներ, որոնք մինչ այդ գործարանը չէր թողարկել և որոնց տեխնոլոգիական նորմաները չէին մշակված: Գործարանի ցխևերում և աշխատանքային տեղամասերում գործարանի ինժեներներն ու կոնստրուկտորները բանվորներին պատմում էին նոր առաջադրանքի մասին: Հանդես գալով մեխանիզատորների ընդհանուր հավաքում, ինժեներ-կոնստրուկտոր Ի. Յանյանն ստաց. «Մեծ կառուցումներին այս անգամ պետք է ուղարկել բոլորովին նոր տիպի հիդրոմեքենաներ. նրանք այժմ գործարանից պահանջում են $SV-100/10$, $SV-50/6$ և $SV-180/10$ տիպի նոր տեսակի տրանսֆորմատորներ: Մեր կոլեկտիվը պետք է կարճ ժամանակամիջոցում յուրացնի այդ տեխնոլոգիան ու պատվավոր առաջադրանքը կատարի պահանջված ժամկետում»¹:

Գործարանի բանվորների և ինժեներա-տեխնիկական անձնակազմի համատեղ ու նվիրված աշխատանքը հաջողությամբ պսակվեց: Թողարկված առաջին տրանսֆորմատորների փորձարկումը տվեց զերպահանջ արդյունքներ. ստեղծվեցին հիդրոտեխնիկական խոշոր կառուցումներին արժանի նոր տիպի տրանսֆորմատորներ:

Դեռ նոր էր ավարտվել Կույբիշևյան և Ստալինգրադյան կառուցումների պատվերների առարումը, երբ գործարանի կոլեկտիվը Ցիմլյանսկի հիդրոհանգույցի շինարարներից ստացավ հետևյալ նամակը. «Թանկագին ընկերներ՝, Ցիմլյանսկի հիդրոհանգույցի կառուցողների կոլեկտիվն ստանձնել է սոցիալիստական բարձր պարտավորություններ և օրավուր բարձրացնում է շինարարական աշխատանքների տևելքը: Պատասխանատու խնդիրների հաջող կատարումը շատ բանով կախված է մատակարարող գործարաններից... Ներկայումս մենք տրանսֆորմատորների մեծ կարիք ունենք, որոնք հարկավոր են պատենշի կառուցման աշխատանքների արագացման, ինչպես նաև ամբողջ հիդրոհանգույցի էներգոսխառմի զարգացման համար...»²:

Ի պատասխան այս նամակի, գործարանի մի շարք ցխևերի բանվորներն ու ինժեներա-տեխնիկական աշխատողները հերթափոխի են կանգնում: Էլեկտրամեքենաշինարարների եռանդուն աշխատանքն իր հիանալի արդյունքները տվեց: Նոր տիպի ուժային հզոր տրանսֆորմատորներ ուղարկվեցին Ցիմլյանսկի հիդրոհանգույցը:

Նոր յուրացվող բնագործակ ուղղակի տարածություններում գյուղատնտեսական պրոցեսների էլեկտրիֆիկացման տեսակետից չափազանց կարևոր նշանակություն ունի էլեկտրամեքենաշինական գործարանի պատրաստած էլեկտրական շարժական ենթակայանը, որը ղեկավարվում է ավտոմատ կերպով: Այդ շարժակայանի ղեկն այն է, որ նա հիմնական կայանից էլեկտրական հոսանքը վերցնելով՝ կանոնավորում է այն և հաղորդում էլեկտրատրակտորին: Այդպես է կատարվում էլեկտրահանգումը: Այդ մեքենան պատրաստվել է արտադրության ու գիտության մարդկանց համատեղ ստեղծագործական աշխատանքի միջոցով, Հայաստանում, որտեղ սովետական կարգերի հաստատումից առաջ չկար որևէ տիպի մեքենայի արտադրություն:

Աշխատանքի նկատմամբ կոմունիստական վերաբերմունքի փայլուն արտահայտություն է նորարարական շարժումը՝ սոցիալիստական մրցության ավելի բարձր փուլը: Նորարարական մասնագետական շարժման ընթացքում աճում է սովետական մարդկանց կոմունիստական գիտակցությունը, նրանց սակավագործական նախաձեռնությունը: Կոմունիզմն սկսվում է այնտեղ, որտեղ է Լ. Ի. Լենինը, որտեղ երևան է գալիս շարքային բանվորի անձնվեր աշխատանքը:

¹ «Սովետական Հայաստան», 1950, № 113:

² Նույն տեղում, № 119:

Նրեանք Ավտոդետալ գործարանի կոլեկտիվը, ծավալելով սոցիալիստական մրցությունը և ամրապնդելով նորարարների առաջավոր փորձը, Հիդրոտեխնիկական մեծ կառուցումների պատվերները կատարեց ժամկետից շուտ և որակով: Միայն երկու տարվա ընթացքում մոտ 130 հազար ավտոմեքենայի մասերի լրիվ կոմպլեկտ ուղարկվեց նորակառույցներին: Պատվերների կատարման ընթացքում ուսումնասիրվեցին ու արտադրության մեջ արմատավորվեցին սոցիալիստական աշխատանքի 30 նոր եղանակ: Միայն մեկ ամսվա ընթացքում գործարանում եղել են արտադրական պրոցեսների 422 ռացիոնալիզատորական առաջարկություններ, որոնց կիրառման շնորհիվ մոտ մեկ միլիոն ռուբլու խնայողություն է կատարվել:

Ավտոդետալցիները դեռ նոր էին կատարել Ստալինգրադյան Հիդրոհանգույցին պլանից դուրս ավտոմասեր ուղարկելու պատվերը, երբ նամակ ստացվեց Վոլգա-Դոն ջրանցքի շինարարության շինարարության ղեկավարի պալատից, շինարարները գրում էին. «Վոլգա-Դոն ջրանցքի շինարարության տրանսպորտն աշխատում է զգալիորեն պայմաններում, վատ ճանապարհները և թանձր փոշին ժամանակից շուտ են շարքից հանում ավտոմեքենաները: Շինարարության վարչությունը խնդրում է Ձեզ մեր ավտոտրանսպորտի համար պաշտոնապես ԶԴՄ—5 և ԳԱԶ—5 ավտոմեքենաների 275 զանազան մասեր: Ավտոմասերի առաքումը մեր կոլեկտիվը կդիտի որպես ձեր օգնությունը ջրանցքի շինարարությանը»¹: Նույնպիսի նամակ ստացվեց նաև Կախովկայի Հիդրոէլեկտրակայանի շինարարներից. «Ննդրում ենք,— գրում էին նրանք,— Կախովկայի Հիդրոէլեկտրակայանի շինարարության համար կարճ ժամկետում լրացուցիչ կարգով ուղարկել ավտոմասեր: Խորին շնորհակալություն ձեր ուշադրության համար: Ջերմ բարեններ»²:

Նոր առաջադրանքի կատարումն ստանձնեցին գործարանի կոմերիտական-երիտասարդական բրիգադները: Տեղամասերում կազմակերպվեց ռիթմիկ աշխատանք: Գործարանի կոլեկտիվը պատվով կատարեց այդ նոր առաջադրանքները ևս:

Վոլգա-Դոն ջրանցքի նախաթողարկման ևս ունեցնում էր շինարարները խոսք էին տվել ժամկետից շուտ ավարտել օխովյանսկի Հիդրոհանգույցի ջրթափ: Երկաթբետոնե ամբարտակի միջոցով Դոնի ջուրը բաց թողնելու հետ կապված բոլոր աշխատանքները, շինարարական հրապարակում զգացվեց կալցիումի կարբիդի պակաս: Վոլգա-Դոն ջրանցքի այդ զգալիության մասին իմացան Նրևանի Կարբիդի գործարանի բանվորները և որոշեցին շուտ կարգով օգնել կառուցողներին: Կարբիդագործները շինարարությանը ուղարկեցին երեք վագոն կարբիդ: Շինարարները շուտապես շնորհակալություն հայտնելու Նրևանի իրենց ընկերներին. «Մենք խորին շնորհակալություն ենք հայտնում գործարանի կոլեկտիվին, վարչությանը և պարտկազմակերպությանը՝ Ֆիմլյանսկի Հիդրոհանգույցի շինարարությանը ձեր ուղարկած կալցիումի կարբիդի համար: Մյն ամենալաված սրահին, երբ կառուցողների կոլեկտիվը ավարտում էր պատնեշի կառուցումը՝ Դոնի ջուրը պատնեշով բաց թողնելու համար, կալցիումի կարբիդի ստացումը արմատապես գործնական հնարավորություն տվեց սահմանված ժամկետին կատարելու նեցուկների զոդումը՝ բետոնման համար»³:

Հիդրոտեխնիկական կառուցումներին պատվին ծավալված համաժողովրդական շարժման մեջ իր ակտիվ մասնակցությունն ունեցավ Նրևանի Կոմպրեսորների գործարանը, որը Ստալինգրադյան Հիդրոհանգույցի և Վոլգա-Դոն ջրանցքի կառուցողների պատվերով ձեռնամուխ եղավ կոմպրեսորների և պոմպերի պատրաստմանը: Հիդրոտեխնիկական կառուցումների բոլոր պատվերները գործարանի կոլեկտիվը ավարտեց ժամկետից 25 օր շուտ, Վոլգա-Դոն ջրանցքի, Ստալինգրադյան և Կախովկայի Հիդրոէլեկտրակայանների շինարարությունների հասցեով ուղարկելով բազմաթիվ կոմպրեսորներ:

Հիդրոտեխնիկական կառուցումներում իր լուծման էր մուծում նաև Նրևանի Կարբիդ գործարանը: Միայն 1951 թվականին, սահմանված ժամկետից շուտ, Վոլգա-Դոն ջրանցքի շինարարության մեխանիզմների համար գործարանն ուղարկել է 29.000 մետր գերազանց որակի կարել, ինչպես նաև մի քանի տասնյակ կիլոմետր կարել և զանազան էլեկտրալարեր երկրի այն գործարաններին, որոնք նույնպես մեծ կառուցումների պատվերներն էին կատարում:

Ավտոդետալի գործարանի կոլեկտիվը, կատարելով հարազատ կառուցումների պատվերները, միայն Ստալինգրադյան էլեկտրակայանի շինարարներին է ուղարկել 4450 կոմպլեկտ ավտոդետալ: Ստալինգրադյան Հիդրոէլեկտրակայանի շինարարության տրանսպորտային բաժնի

¹ Ավտոդետալ գործարանի արխիվ, գործ № 2:

² Նույն տեղում, գործ № 3:

³ «Սովետական հայաստան», 1951, № 286:

կուլեկտիվի ժողովը, քննության առնելով պարկի տեխնիկական վիճակը, նշեց նրանի Ավտո-դոլերի և Ավտոդետալ գործարանների արտադրանքի բարձր որակը:

Հիդրոտեխնիկական կառուցումների համաժողովրդական գործին իրենց ակտիվ մասնակցությունը ցույց տվին նաև մի շարք այլ գործարաններ և արտադրական կուլեկտիվներ:

* * *

Սոցիալիստական Հայրենիքի աննախընթաց հաջողությունների մեջ մեծ են նաև սովետական գիտության ծառայությունները: Սովետական առաջավոր գիտության անպարտելի ուժը տնտեսության և պրակտիկայի միասնության մեջ է: Եվ այդ ուժը անսպառ է, քանի որ նա կոչված է ծառայելու ժողովրդին, կոմունիզմի կառուցման մեծ գործին: Սովետական գիտնականների, ինչպես և մեր ամբողջ ժողովրդի համար գիտությունը հզոր միջոց է բնության և հասարակական կյանքի սոցիալիստական վերափոխման համար: Դա ակնհայտ կերպով երևում է նաև խոշոր հիդրոէլեկտրակայանների և ջրանցքների կառուցումների, բնության վերափոխման պլանների իրագործմանը սովետական գիտնականների ունեցած բեղմնավոր մասնակցությունից:

Մեր երկրում խոշորագույն հիդրոտեխնիկական կառուցումների ստեղծումը սովետական առաջավոր գիտության անկաշկանդ զարգացման ու ծաղկման վկայությունն է: Իրականացել են մեծ լենինի կանխատեսումները սոցիալիզմի ժամանակ գիտության շտեմնված զարգացման մասին: «...Միայն սոցիալիզմը կազատի գիտությունը նրա բուրժուական կապանքներից, կապիտալիստական և քաղաքական կապիտալիստական շահասիրությանը ստրկանալուց...»¹:

Սովետական գիտնականները, ղեկավարվելով Կոմունիստական պարտիայի ցուցումներով, գիտության նվաճումներն ու նրա հայտնագործություններն ի սպաս են դնում մեր երկրի ժողովրդական տնտեսության ամենարագմազան բնագավառներին:

Սոցիալիզմից կոմունիզմին անցնելու ժամանակաշրջանում, երբ լուծվում են միասնական հիդրոտեխնիկական կառուցումների խոշորագույն կոմպլեքսների ստեղծման մեծագույն խնդիրները, այդ միջոցառումներին ստեղծագործական մասնակցություն են ունենում միության բոլոր ռեսպուբլիկաների արտադրության բոլոր ճյուղերի բանվորները, ինժեներներն ու տեխնիկները:

Որպես գիտության և պրակտիկայի, գիտնականների ու կառուցողների ստեղծագործական կապի և համագործակցության նոր ձև, ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիային և միութենական ռեսպուբլիկաների գիտությունների ակադեմիաներին կից կազմակերպվեցին հիդրոտեխնիկական կառուցումներին աջակցող կոմիտեներ, որոնք, ղեկավարելով ու կոորդինացնելով գիտության բնագավառի աշխատողների ջանքերը, ապահովեցին մեծ կառուցումների հետ կապված գիտական պրոբլեմների արագ լուծումը:

Կոմպլեքսային արշավախմբերի տասնյակ ջոկատներ, որոնք միավորում էին գիտության բազմաթիվ ասպարեզների բազմաթիվ ներկայացուցիչների, կառուցումների շրջանում կատարեցին իրենց բեղմնավոր հետազոտությունները: Բելոռուսիայի գիտնականները մշակեցին նորակառույցների հողային աշխատանքների մեքենայացման հարցերը, Լատվիայի գիտնականները՝ ձուլվածքների և ցեմենտի նոր բարձր տեսակների ստացման պրոբլեմը, Ուկրաինայի, ՌՍՖՍՌ-ի, Վրաստանի, Հայաստանի և ուրիշ ռեսպուբլիկաների գիտնականներն զբաղվեցին կառուցումների նախագծման և տեսական հաշվումների կատարման արժեքավոր գործով:

Սովետական գիտնականների մեծ բանակում առաջավորների շարքում փայլեց նաև Սովետական Հայաստանի գիտնականների ջոկատը, որի աշխատանքները կոորդինացնում և ուղղություն էր տալիս Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիային կից կազմակերպված՝ մեծ կառուցումներին աջակցող կոմիտեն: Այդ կոմիտեն կենտրոնական նախագծային կազմակերպությունների հետ միասին հշտեց լուծման ենթակա մի շարք գիտատեխնիկական հարցեր, մշակեց Ստալինգրադյան և Կույբիշևյան հիդրոէլեկտրակայանների նախագծերը կազմելու հետ կապված գիտատեխնիկական կարևոր խնդիրների հստակ թեմատիկ պլան, բազմակողմանի և էֆեկտիվ օգնություն ու օժանդակություն ցույց տվեց կառույցների պատվերները կատարող գիտա-հետազոտական ինստիտուտներին և լաբորատորիաներին, ստեղծում էր նախագծային կազմակերպությունների միջև:

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 27, էջ 511:

Այն հիգրոտեխնիկական կառուցումները, որոնք բարձրանում են մեծ գետերի վրա, առաջացնում են ջրային ռեժիմի նկատելի փոփոխություններ և դժվարին պայմաններ են ստեղծում ինչպես շինարարության, այնպես էլ շահագործման համար: Ուստի հիգրոտեխնիկայի և առանձին կառուցումների նախագծման ժամանակ անհրաժեշտ է առավելագույն չափով հաշվի առնել այդ առանձնահատկությունները:

Հիգրոտեխնիկական գիտություն մեջ ստեղծվել է լաբորատոր նախագծումների մի նոր բնագավառ, որը արագ զարգացում է գտել Հայկական ՍՍՌ-ում և ունի հաշվումներ կատարելու մեծ հնարավորություններ: Լաբորատոր նախագծումների կուլյուրն այն է, որ փորձնական մոդելների վրա ստուգման են ենթարկվում կառուցումների հիմնական տվյալները՝ նրանց աշխատանքի տարբեր պայմաններում, մշակվում են կոնստրուկցիայի նոր տիպեր, որոնք հանձնարարվում են նախագծային կազմակերպություններին ու շինարարներին՝ արտադրության մեջ արմատավորելու համար:

Լաբորատոր նախագծման մեթոդներով Կուլյուրիչյան հիգրոտեխնիկայի ալիքային պրոցեսների հետազոտման բարդ խնդիրների լուծման պատասխանատու պարտավորությունն ստանձնեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Զրախներգետիկ ինստիտուտի դիտակուս կոլեկտիվը:

1950 թ. նոյեմբերին ՍՍՌԻ «Հիգրոպրոյեկտինգ» ստացվեց Կուլյուրիչյան հիգրոտեխնիկայի մոդելի պատրաստման պատվերը: Նույն տարվա դեկտեմբերի 26-ին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետը որոշում ընդունեց «Կուլյուրիչյան հիգրոտեխնիկայի մոդելի կառուցման մասին»: Այդ մոդելի վրա հետազոտվելու էին ալիքային երևույթները: Զրախի հոսանքի ալիքային շոթոշված շարժումների հետազոտության նպատակով ինստիտուտի և Հայպետին տրեստի կոլեկտիվների միացյալ ուժերով երեք ամսվա ընթացքում նորոգում կառուցվեց հիգրոտեխնիկական լաբորատորիա: Կառուցված գործող մոդելի վրա կատարվեցին բազմաթիվ փորձեր, որոնց հիման վրա հաջողությամբ մշակվեցին շլուզների, միջշլուզային ջրանցքի և էլեկտրակայանի շենքի կառուցման հետ կապված մի շարք կարևորագույն պրոբլեմներ:

Կուլյուրիչյան հիգրոտեխնիկայի գործող մոդելի վրա կատարված փորձնական հետազոտությունների զուգորթաց, Զրախներգետիկ ինստիտուտի գիտական կոլեկտիվը տեսական աշխատանք կատարեց նաև ալիքային պրոցեսների ավելի խոր հետազոտության ուղղությամբ: Կառուցված մոդելի վրա կատարված հետազոտությունները բացահայտեցին Վոլգա գետի նավարկության համար արժեքավոր մի շարք հարցեր, որոնք ընդունվեցին և կիրառվեցին նախագծային կազմակերպությունների կողմից:

ՍՍՌԻ Գիտությունների ակադեմիայի Մովսիս հիգրոֆիզիկական ինստիտուտի դիրեկտոր ակադեմիկոս Վ. Վ. Շուլեյկինը, ծանոթանալով Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Զրախներգետիկ ինստիտուտի կողմից Կուլյուրիչյան հիգրոտեխնիկայի մոդելի վրա կատարված հետազոտությունների արդյունքներին, գրել է. «...Միանգամայն անկասկած է, որ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Զրախներգետիկ ինստիտուտի կողմից արժեքավոր խոշոր աշխատանք է կատարված Կուլյուրիչյան հիգրոտեխնիկայի ստորին ջրարգելակային ջրանցքի շկայունացած շարժման հետազոտության ուղղությամբ՝ այդ ջրանցքում ալիքների հետազոտության համար»¹:

Գիտական հետազոտությունների համար մոդելավորման մեթոդը գնալով ավելի մեծ նշանակություն է ձեռք բերում սովետական գիտնականների հետազոտական աշխատանքում: Դրա կիրառումը գիտության և տեխնիկայի տարբեր բնագավառներում ապահովում է միջոցների ու ժամանակի չափազանց մեծ խնայողություն, ինչպես նաև հիգրոտեխնիկական կառուցումները կատարելադրվելու հնարավորություն:

Խոշոր կառուցումների հետ կապված գիտա-հետազոտական աշխատանքներին ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին նաև Գիտությունների ակադեմիայի Երևանյան կոլեկտիվների և Երկրաբանական գիտությունների ինստիտուտների դիտակուս կոլեկտիվները:

Այս ինստիտուտների խնդիրն էր օգնել շինարարներին՝ ընտրելու այնպիսի շինանյութեր, որոնք իրենց դիմացկունությամբ ու հանքավայրերի մոտիկությամբ զգալիորեն կրճատեին շինարարական ծախսերը և շինարարությունն ապահովեին տեղական շինանյութերով: Այս նպատակով հիշյալ ինստիտուտների միացյալ արշավախումբը Վոլգայի աջ ափին, Կամիշին, Սա-

¹ Հայկական ՍՍՌ ԳԱ Զրախներգետիկ ինստիտուտի արխիվ. 1951, գ. 3:

բատով և Խվալինսկ քաղաքների շրջանում, հետազոտական ընդարձակ աշխատանքներ կատարեց՝ տեղական շինանյութերի հայտնաբերման և շահագործման հանձնելու ուղղությամբ: Արշավախումբը այդ վայրերում հայտնաբերեց մի շարք նոր հանքավայրեր, որոնց մեջ իր պաշարներով և քարի որակով կարևորագույն տեղ է գրավում Խվալինսկ քաղաքի շրջանում գտնվող Ալեքսեևյան հանքավայրը՝ 1,5 միլիոն խոր. մ. բարձրորակ քարի պաշարով: Այս և մյուս վայրերում հայտնաբերված քարի պաշարները բավարարեցին Ստալինգրադի հիգրոհանգույցի կառուցումների 1/3 մասը և տվեցին 400 միլիոն ուրբլու անտեսում, զգալիորեն կրճատելով Հայավայրի Ուրալից և Հյուսիսային Կովկասից տեղափոխվող շինանյութերի քանակը: Ստալինգրադյան ջրամբարի քաղաքամերձ ափերը ողողումից պաշտպանելու նպատակով, դրանք երեսպատվեցին տեղում հայտնաբերված այն շինաքարերով, որոնց ամբողջությունը փորձարկվեց Հայկական ՍՍԻ Գիտությունների ակադեմիայի Շինանյութերի և կառուցվածքների ինստիտուտի էղովից: Ինստիտուտում նախագծված և Հենինականի Մեխանիկական գործարանում պատրաստված քարհատ նոր մեքենան նույնպես հանդիսացավ ինստիտուտի նվերներից մեկը մեծ կառուցումներին:

Ինչպես հայտնի է, Վոլգայի աջ ափը ենթակա է սողանքային երևույթների. ալիքների հարվածներից ու գարնանային հեղեղումներից այն աստիճանաբար կորցնում է իր հենարանը և սողում ցած: Այդ սողանքները լուրջ վտանգ են ստեղծում Վոլգայի շրջանում գտնվող քաղաքների, բնակավայրերի և ինժեներական կառուցվածքների համար: Սողանքների դեմ պայքարը պահանջում է ինժեներա-մեխիորատիվ լուրջ միջոցառումներ: Անհրաժեշտ էր ուսումնասիրել սողանքների դինամիկան, առանց որի ոչ միայն հնարավոր չէր հասկանալ սողանքների բնույթը և հիմնավորել, թե ի՞նչ ուղղությամբ կուժեղանա նրանց շարժումը, այլև հնարավոր չէր նախագծել հակասողանքային ինժեներական ռաջիոնալ կառուցումներ:

Ուլյանովսկ քաղաքի շրջակայքի սողանքային երևույթներին հետազոտությունը հանձնարարվեց Հայկական ՍՍԻ Գիտությունների ակադեմիայի Երկրաբանական գիտությունների ինստիտուտին, որը պատվով կատարեց իր վրա դրված պատասխանատու պարտավորությունը:

Մեր երկրում ծավալված հիդրոտեխնիկական կառուցումները հնարավորություն են տալիս «գտագործելու» ընդարձակ հողային տարածություններ, որոնց մշակումը էլեկտրատրակտորների միջոցով կարող է մեծ արդյունքներ տալ: Մեր ռեսպուբլիկայի Գիտությունների ակադեմիայի էլեկտրատեխնիկական լաբորատորիան իր պատրաստակամությամբ հայտնեց մասնակցելու էլեկտրատրակտորների և էլեկտրասարքավորումների բարդ պրոբլեմների մշակման հետազոտական աշխատանքներին:

Այս պատվավոր խնդիրը կատարելու համար էլեկտրատեխնիկական լաբորատորիան հաստատեց գիտության և արտադրության մարդկանց ստեղծագործական ամուր համագործակցություն: Լաբորատորիայում էլեկտրատրակտորի փորձարկումները տվեցին գրական արդյունքներ: Գիտության և արտադրության տարբեր հյուղերի ներկայացուցիչների՝ էլեկտրիկների, երկրաբանների, տեխնոլոգների համագործակցված աշխատանքը՝ տեղական հումքից բարձր լարվածության հոսանքի մեկուսիչներ ստանալու ուղղությամբ, նույնպես տվեց իր գրական արդյունքները:

Ռեսպուբլիկայի գիտական աշխատողները կատարելով երկրի խոշոր նորակառույցների պատվերները, օրրստօրե լայնացնելով իրենց գիտական-ստեղծագործական աշխատանքների ջրհանակները, արժեքավոր ավանդ մտցրին մեծ էլեկտրակայանների ու ջրանցքների շինարարության հետ կապված գիտա-տեխնիկական շատ պրոբլեմների լուծման գործում:

Մեր բազմազգ սոցիալիստական պետությունը, հենվելով ժողովուրդների լենինյան անխախտ բարեկամության ու նրանց եղբայրական սերտ համագործակցության վրա, ներկայումս իրագործում է Սովետական Միության ժողովրդական անտեսության զարգացման յոթնամյա պլանը:

Յոթնամյա պլանով նախատեսված խոշոր հիդրոտեխնիկական կառուցումները դարձել են համաժողովրդական կառուցումներ, նրանցում մի անգամ ևս վառ կերպով դրսևորվում է ՍՍԽՄ բոլոր ժողովուրդների բազմակողմանի համագործակցությունը, որովհետև յուրաքանչյուր ազգային ռեսպուբլիկայի շահերը ներդաշնակում են ընդհանուր պետական շահերին:

Խոշոր հիդրոտեխնիկական կառուցումների փորձով հարստացած՝ Հայաստանի աշխատավորները շարունակում են իրենց ակտիվ մասնակցությունը ցուցաբերել Բրատսկի, Կրասնոյարսկի, Կրեմենչուգի, Քուխտարմայի հիդրոէլեկտրակայանների կառուցմանը, մեր Հայրենիքի բնական անսպառ հարստությունների օգտագործման աշխատանքներին:

УЧАСТИЕ ТРУДЯЩИХСЯ АРМЕНИИ В КРУПНЫХ СТРОЙКАХ ПЯТОЙ ПЯТИЛЕТКИ (1951—1955)

А. А. АЗИЗБЕКЯН

(Р с з ю м е)

В директивах по пятому пятилетнему плану развития народного хозяйства СССР на 1951—1955 годы были намечены величественные задачи дальнейшего развития социалистической экономики.

Постановления Совета Министров СССР о строительстве Куйбышевской, Сталинградской, Каховской гидроэлектростанций, об ускорении строительства Волго-Донского канала с Цимлянкой гидроэлектростанцией открыли новый этап в развитии и электрификации промышленности и сельского хозяйства СССР.

На основе фактического материала автор статьи показывает активное участие трудящихся Армении в указанных стройках. Выполняя их заказы, промышленные предприятия республики отправляли им трансформаторы, генераторы, насосы, кабельную продукцию, автопокрышки, карбид кальция, автомобильные запасные части, строительные материалы и т. д.

Ценный вклад в строительство всенародных строек внесли также научные коллективы республики. Водно-энергетический институт Академии наук Армянской ССР решил некоторые сложные задачи исследования волновых движений Куйбышевского гидроузла. Комплексная экспедиция институтов строительных материалов и сооружений и геологических наук АН Армянской ССР на берегу Волги обнаружила ряд новых месторождений строительных материалов. Электротехническая лаборатория участвовала в разрешении сложных проблем создания электротракторов и агрегатов, Институт математики и механики АН Армянской ССР подверг изучению вопрос о напряжениях бетонов в массовых бетонных толщах.